ՍՍՀՄ 60 ԱՄՅԱԿԸ

ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Խ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Վաթսուն տարի առաջ, 1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում, Կրեմլում բացված Սովետների համամիութենական առաջին համագումարը, արտահայտելով սովետական բոլոր հանրապետությունների միահամուռ կամքը, ընդունեց Դեկլարացիա՝ բանվորների և գյուղացիների աշխարհում առաջին միասնական միութենական բազմազգ պետության՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման մասին։ Դա քաղաքական խոշոր իրադարձություն էր, մեծ Հոկտեմբերի արգասիքը, նրա վսեմ գործի, սովետների երկրում կատարված հեղափոխական վերափոխումների շարունակությունը։ ՍՍՀ Միության կազմավորումը մի նոր ուղենիշ էր մեր երկրի ազգերի ու ազգությունների իրավական ու փաստական հավասարության և ազգային ծայրամասերի զարգացման համար մղվող պայքարում, սովետական ժողովրդի ճակատագրում։

ՍՍՀՄ վաթսունամյա հերոսական պատմությունը սովետական սոցիալիստական պետության կազմում միավորված բոլոր ժողովուրդների անխախտ միասնության ու բարեկամության մեծ տոնն է։ Փառապանծ 60-ամյակը, որ սովետական ժողովուրդը նշանավորեց սոցիալ-տնտեսական, քաղաքական-արտադրական նոր վերելքով, սոցիալիզմի պատմական նվաճումների վառ վկայությունն է, կարևոր փուլ՝ համատեղ կոմունիզմ կառուցող իրավահավասար հանրապետությունների համերաշխ մեծ ընտանիքի, սովետական ժողովրդի, նրա մարտական ավանգարդի՝ կոմունիստական կուսակցության կյանքում, ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների հաջող իրականացման, մեր երկրի ժողովուրդների բարեկամության ու եղբայրության ամրապնդման ասպարեզում։

ՍՍՀՄ կազմավորումը իր քաղաքական նշանակությամբ և սոցիալ-տընտեսական հետևանքներով աննախընթաց է մարդկության պատմության մեջ, հավասարազոր ՍՍՀՄ սոցիալիստական ինդուստրացմանը, գյուղատնտեսության կոլեկտիվացմանը և կուլտուրական հեղափոխությանը։ ՍՍՀՄ կազմավորումը լենինյան հանճարի ծնունդ է։

Իր բազմաբովանդակ գործունեության ընթացքում Վ. Ի. Լենինը մշակեց սոցիալիստական հեղափոխության բաղկացուցիչ մասը կազմող ազգային հարցի վերաբերյալ կուռ ուսմունք, բացահայտեց ազգային հարցի տեղն ու դերը աշխարհի հեղափոխական վերափոխման մեջ, ցույց տվեց նրա ենթակայությունը պրոլետարիատի դասակարգային պայքարի, սոցիալիզմի շահերին։ Դեռևս բոլշևիզմի առաջացման արշալույսին «Իսկրայում» հրապարակած հոդվածներում, այդ թվում՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստի մասին» (1903 թ.), «Ազգային հարցը մեր ծրագրում» (1903 թ.) և այլ գործերում նա խորապես մեկնաբանել է կուսակցության ազգային քաղաքականության հիմնական դրույթները։ Բոլշևիկյան կուսակցության ազգային ծրագիրը հետագայում իր զարգացումն ստացավ և հարստացավ Վ. Ի. Լենինի «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին» (1913 թ.), «Նամակ Ս. Գ. Շահումյանին» (1913 թ.), «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» (1914 թ.), «Ինքնորոշման վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները» (1916 թ.) աշխատություններում, ՌԿ(բ)Կ VIII համագումարում կուսակցու-

թյան ծրագրի մասին (1919 թ.), Կոմինտերնի II կոնգրեսին ազգային և գաղութային հարցի վերաբերյալ ներկայացրած թեզիսներում և այլ աշխատություններում։ Ազգային հարցի վերաբերյալ լենինյան ուսմունքի հիմքը պատմական մատերիալիզմն է, գիտական կոմունիզմի սկզբունքները։ Նրա անհաղթ ուժը, ամենից առաջ, գրսևորվում է ժողովուրդների բարեկամության ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի, «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մարքսիստական նշանաբանին անսահման հավատարմության մեջ։

Վ. Ի. Լենինը բացառիկ նշանակություն էր տալիս ցարիզմի օրոք հարբստահարված ժողովուրդների լիակատար վստահությունը նվաճելուն։ «Դա համաշխարհային հարց է, համաշխարհային առանց չափազանցության,— գրել է Լենինը,— ...Դա կանդրադառնա Հնդկաստանի վրա, Արևելքի վրա, որտեղ կատակել չի կարելի, այստեղ հարկավոր է 1000 անգամ զգույշ լինել»[1]։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը իր բնույթով լինելով ինտերնացիոնալ՝ փշրեց սոցիալական և ազգային ճնշման շղթաները, իրականացրեց կուսակցության ազգային քաղաքականությունը, որի հիմքում ընկած է ազգերի ինքնորոշման լենինյան գաղափարը։

Վ. Ի. Լենինը գիտական խոշոր հայտնագործություն կատարեց առաջ քաշելով և հիմնավորելով սովետական ֆեդերացիայի գաղափարը։ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում» (1917 թ.), «Աշխատավոր և շահագործվող ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում» (1918 թ.), ՌՍՖՍՀ և սովետական մյուս հանրապետությունների սահմանադրություններում օրենսդրական կարգով սահմանվեցին Ռուսաստանի բոլոր ազգությունների ազատ զարգացումը և լիակատար իրավահավասարությունը։ Իլյիչը «Աշխատավոր և շահագործվող ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում» հրաշակեց սովետական անդրանիկ ֆեդերացիան՝ Ռուսաստանի հանրապետությունների ֆեդերատիվ ձևը։

Սովետական ֆեդերացիան, իբրև պետականության ձև, ոչ միայն նոր երևույթ է, դեմոկրատիայի բարձրագույն աստիճան, այլև արմատապես տարբերվում է բուրժուական ֆեդերացիայից։ Ազգային հարցը ցայսօր մնում է որպես ամենասուր պրոբլեմը կապիտալիստական երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Բելգիայում, Անգլիայում և այլուր։ Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ բուրժուական հասարակարգը չի կարող միավորել ժողովուրդներին, որ ազգային հարցի լուծման բուրժուական եղանակը դա ժողովուրդների բաժանումն է։ Ճնշող դասակարգերի կողմից հազարամյակների ընթացքում սերմանվել է այն միտքը, թե տարբեր ժողովուրդները չեն կարող ընդհանուր լեզու գտնել, չեն կարող ապրել և աշխատել առանց փոխադարձ պայքարի։ Եվ մարդկությունը իր բազմադարյան պատմության քառուղիներում, ասես թե, ամեն անգամ «հաստատել է» այդ «ճշմարտությունը»... Այսպես է եղել բուրժուական աշխարհում։ Սակայն Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը առաջինը ցույց տվեցին, որ «ազգերի ներսում եղած դասակարգերի հակամարտության հետ միասին կվերանան նաև թշնամական հարաբերությունները ազգերի միջև»[2]։

Իրականացան մարքսիզմի հիմնադիրների կանխատեսումները։ Ի տարբերություն բուրժուական ֆեդերացիայի, որն ստեղծվում է բռնության ու ստրկացման ճանապարհով, նացիոնալիզմի ու ռասայական անհավասարության, բյուրոկրատական, միլիտարիստական ցենտրալիզմի հիման վրա, սովետական ֆեդերացիան սոցիալիստական հանրապետությունների պետական կառուցվածքի նոր ձև է։ Այն հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրայի, բազմազգ պետության կառուցման հնարավոր և նպատակահարմար ձև՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում։ Սովետական ֆեդերացիան խարսխված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի, մարքս-լենինյան գաղափարախոսության, կամավոր միավորման ու հավասարության, ազգային տերիտորիալ կառուցվածքի և կառավարման դեմոկրատական ցեն-

---

[1] XXV Ленинский сборник, с. 321.

[2] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս. Ընտիր երկեր. հ. 1, էջ 161։

տրալիզմի սկզբունքների վրա։ Սովետական ֆեդերացիայում ազգերը լիիրավ են, սովերեն, մեծ հնարավորություններ ունեն բուռն ծաղկման, իրենց պետականության, տնտեսության և մշակույթի զարգացման համար՝ օգտվելով խոշոր սոցիալիստական պետականության, եղբայրական ժողովուրդների փոխադարձ համագործակցության առավելություններից։ Վ. Ի. Լենինը և նրա զինակիցները հետևողականորեն զարգացրին սովետական ֆեդերացիայի գաղափարը, հասունացրին այն, որպես անցման ձև դեպի լիակատար միասնությունը։

Սովետական իշխանության արշալույսին գոյություն ունեին ազատագրված աշգերի ու ազգությունների փոխադարձ օգնության զանազան ձևեր՝ քաղաքացիական կռիվների և ռազմական ինտերվենցիայի ժամանակ համատեղ պայքար հակահեղափոխական ուժերի և օտարերկրյա զավթիչների դեմ, կենտրոնական շրջաններից երկրի ծայրամասերին գյուղատնտեսական մթերքների կամավոր մատակարարում և այլ անշահախնդիր օգնություն։

1918—1921 թթ. նախկին ցարական Ռուսաստանի տարածքում ապրող ժողովուրդների փոխհարաբերություններում առաջացան ֆեդերատիվ կապերի ձևեր՝ սովետական անկախ հանրապետությունների պայմանագրային ֆեդերացիա, ՌՍՖՍՀ-ի մեջ մտած ավտոնոմ հիմունքներով ստեղծված ֆեդերացիա, ՌՍՖՍՀ-ի և Բելոռուսիայի, ՌՍՖՍՀ-ի և Թուրքմենստանի միջև ֆեդերատիվ կապերի միջանկյալ ձևը, որն իր մեջ զուգակցում էր ավտոնոմիայի և պայմանագրային սկզբունքների մի քանի գծեր։ Սովետական ֆեդերացիայի յուրահատուկ ձևերից էր Անդրֆեդերացիան, որը սովերեն սովետական հանրապետությունների միավորման առաջին լուրջ փորձն էր։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նոր բովանդակությամբ օժտեց Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը, նոր ուժ և իմաստ հաղորդեց նրանց ինտերնացիոնալ ավանդույթներին։ Ձևավորվեցին ժողովուրդների լենինյան անխախտ բարեկամությունն ու եղբայրական համագործակցությունը, որոնք խարսխված են ամենաառաջավոր գաղափարների՝ մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի վրա։ Ժողովուրդների բարեկամության դրոշը բարձր ծածանեց Բաքվի պրոլետարիատը։ 1918 թ. Ս. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունան պրոլետարական ինտերնացիոնալիզմի հիանալի տիպար էր։

Եղբայրության վառ խորհրդանիշ էր Վ. Ի. Լենինի ցուցումներով 1922 թ. կյանքի կոչված Անդրկովկասյան Ֆեդերացիան, որը շուրջ 14 տարի գործեց հաջողությամբ, կարևոր դեր խաղալով երկրամասի աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության, բազմազգ սոցիալիստական պետության՝ ՍՍՀՄ կազմավորման և զարգացման գործում։ Անդրֆեդերացիան երկրամասի ժողովուրդների պատմության մեջ նշանավորեց նոր փուլ, ժողովուրդների բարեկամության և եղբայրության, ազգային խաղաղության փուլը։ Անդրֆեդերացիան առաջացավ կյանքի թելադրանքով։ Այն դիալեկտիկական օրինաչափություն էր, երկրամասի սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական շահերից բխող պահանջ։ Վ. Ի. Լենինը, հաշվի առնելով երկրամասի առանձնահատկությունները, սովետական կարգերի հաղթանակից հետո Կովկասի կոմունիստներին խորհուրդ էր տալիս Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը միավորել տնտեսական մի կենտրոնում։ Ծրագրային նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի՝ «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղըստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» գրած նամակը, որն իր հետ Կովկաս բերեց Ա. Մյասնիկյանը։ Իլյիչն այդ նամակում խորհուրդ էր տալիս, թե ինչպես վերականգնել և զարգացնել քայքայված ժողովրդական տնտեսությունը, զգույշ և նրբանկատ ազգային քաղաքականություն վարել Արևելքի արթնացող ժողովուրդների նկատմամբ։ Կովկասի սովետական հանրապետությունների «սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ,— ասում էր Վ. Ի. Լենինը,— որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[3]։

3 Վ. Ի. Լենին. Երկեր. հ. 32, էջ 402։

Վ. Ի. Լենինը 1921 թ. նոյեմբերի 28-ին գրում է «Անդրկովկասի Հանրապետությունների ֆեդերացիա կազմելու վերաբերյալ առաջարկի նախագիծը», որը մեկ օր անց հաստատվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի կողմից։ Ա. Մյասնիկյանը 1921 թ. նոյեմբերին իր «Կովկասյան հանրապետությունների ֆեդերացիան» հոդվածում, պարզաբանելով ֆեդերացիայի անհրաժեշտությունը, ասում էր, թե Անդրկովկասյան Ֆեդերացիայի ամբողջ իմաստը հենց այն է, որ ապահովվի Կովկասի ժողովուրդների ազատությունն ու անկախությունը, միավորի առանձին հանրապետությունների բաժան-բաժան ջանքերը, վերացնի նրանց տնտեսական անհաղորդ վիճակը և ստեղծի այնպիսի զորեղ ռազմաքաղաքական միություն, որն ի վիճակի լինի պաշտպանելու Կովկասի աշխատավորների նվաճումները և կուլտուրական զարգացումը։ Ա. Մյասնիկյանը այնուհետև պարզաբանում է, որ եվրոպական կապիտալիստների հովանավորությամբ նրանց կովկասյան լակեյների՝ մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների կազմած սև-դեղին բլոկին պետք է հակադրել եղբայրական աշխատավորական դաշինքը, անկեղծ և հզոր միությունը[4]։

Քանի որ Անդրկովկասը գյուղացիական երկիր էր, պահանջվում էր վերին աստիճանի զգուշություն՝ մանրբուրժուական զանգվածներին սովետական շինարարության ընդհանուր հոսանքի մեջ ներգրավելու համար։ Իլյիչը Կովկասի կոմունիստներին խորհուրդ էր տալիս մեխանիկորեն չընդօրինակել ՌՍՖՍՀ-ում իրականացվող տակտիկան, այլ ստեղծագործաբար, ինքնուրույն կերպով կըշռադատել նրա յուրահատկության պատճառները՝ ելնելով տեղական առանձնահատկություններից, կիրառել 1917—1921 թթ. փորձի ոչ թե տառը, այլ ոգին, իմաստը, դասերը։

Անդրֆեդերացիան ժողովրդական մասսաների միասնական կամքի արտահայտություն էր։ Անդրֆեդերացիայի օրրանի մոտ էին հավատարիմ լենինյաններ Գ. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, Ա. Մյասնիկյանը, Ն. Նարիմանովը, Մ. Օրախելաշվիլին և կուսակցական-պետական այլ աչքի ընկնող գործիչներ։ Երկրամասի բոլշևիկները, ժողովրդական մասսաների շրջանում քայլ առ քայլ հասունացնելով ֆեդերացիայի գաղափարը, 1922 թ. մարտին դնում են Անդրֆեդերացիայի ամուր հիմքը, որի լիակատար ձևավորումն ավարտվում է նույն թվականի դեկտեմբերի 10—13-ը Բաքվում գումարված Սովետների անդրկովկասյան առաջին համագումարում։ Անդրկովկասի եղբայրական երեք հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների 1922 թ. մարտին Թիֆլիսում գումարված կոնֆերանսը հռչակեց Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միություն (ԱՍՍՀՖՄ)։ Ջենովայի կոնֆերանսի նախօրյակին, ի հակակշիռ Փարիզի անդրկովկասյան բուրժուանացիոնալիստական վտարանդիական կոնֆերանսի, դա մեծ հաղթանակ էր և՛ ներքին, և՛ միջազգային առումով։

Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սովետական սոցիալիստական հանրապետությունների միութենական պայմանագրում նշվում էր, թե երեք հանրապետությունները, ղեկավարվելով ազգությունների ինքնորոշման սկզբունքներով, ճանաչելով պայմանավորվող յուրաքանչյուր կողմի անկախությունն ու ինքնուրույնությունը և գիտակցելով համախմբման անհրաժեշտությունը, որոշում են, որ այսուհետև Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի սովետական սոցիալիստական հանրապետությունները միմյանց հետ ռազմական, քաղաքական և տնտեսական դաշինք են կնքում։ Միութենական պայմանագրի բոլոր 13 կետերն էլ տոգորված են պրոլետարական ինտերնացիոնալիզմի, փոխադարձ հարգանքի և ինքնուրույնության պահպանման ոգով։ Սովետների անդրկովկասյան առաջին համագումարի բացումից առաջ, 1922 թ. դեկտեմբերի 10-ի առավոտյան, Ա. Մյասնիկյանի նախագահությամբ գումարվեց ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի կոմունիստական կուսակցությունների կենտկոմների համատեղ պլենումը։ Ամփոփվեց անցած շրջանում կատարված աշխատանքը, քննարկվեցին համագումարի հետ կապված

[4] Տե՛ս Ա. Մ յ ա ս ն ի կ յ ա ն. Ընտիր երկեր. Երևան, 1957, էջ 368։

գործնական հարցերը։ Նույն օրը, երեկոյան ժամը 6-ին, հանդիսավոր իրադրության մեջ բացվեց Սովետների անդրկովկասյան առաջին համագումարը։ Երկրամասի աշխատավորները համագումար էին ուղարկել 582 պատգամավոր, այդ թվում՝ 175 ադրբեջանցի, 160 վրացի, 131 հայ, 83 ռուս, 12 հրեա և Անդրկովկասի մյուս ազգությունների ներկայացուցիչներ։ Նրանցից բանվորներ էին՝ 195, գյուղացիներ՝ 125, բարձրագույն կրթությամբ՝ 75, միջնակարգ՝ 194, տարրական կրթությամբ՝ 308 հոգի[5]։

Համագումարը լսեց Ն. Նարիմանովի և Գ. Օրջոնիկիձեի զեկուցումները, հավանություն տվեց Անդրկովկասի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միության ութամսյա գործունեությանը, որոշեց այն վերակազմել Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ԱՍՖՍՀ)։ Այսպիսով ավարտվում է Անդրֆեդերացիայի կազմավորումը։ Համագումարն ընտրեց սովետների առաջին համագումարի պատգամավորներ։ Անդրկովկասյան Ֆեդերացիան հանդիսացավ այն ամուր հիմնաքարը, որի վրա բարձրացավ երկրամասի ժողովուրդների լենինյան անխախտ բարեկամության ամրոցը։

Սովետական իշխանության սկզբնական շրջանում Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական տարրերը ջանում էին խափանել կոմունիստական շինարարությունը։ Անդրֆեդերացիայի ուղին հարթ չէր։ Քիչ փոթորիկներ, անցանկալի երևույթներ, դիմադրություն և թշնամական հարձակումներ չեղան Անդրֆեդերացիայի կազմավորման ճանապարհին։ Բայց դրանք բոլորն էլ վըճռականորեն հաղթահարվեցին հանուն եղբայրական հարաբերությունների ամուր հաստատման, հանուն ազգային հարցի լենինյան լուծման։ Ֆեդերացիան կոչված էր ոչ միայն վերացնելու բուրժուական նացիոնալիստների «ժառանգությունը»՝ սահմանային, տրանզիտային, արոտավայրերի, ջրերի օգտագործման և այլ վեճերը, այլև ստեղծելու բարեկամական առողջ մթնոլորտ, շիկացած երկաթով այրելու և ոչնչացնելու նացիոնալիզմը, երկրամասի ժողովուրդներին կոփելու պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով։

Անդրֆեդերացիան պատվով կատարեց այդ խնդիրը, դարձավ ժողովուրդների լենինյան բարեկամության դարբնոց։ Անդրֆեդերացիան ինքնանպատակ չէր, այլ հզոր միջոց էր, ՆԷՊ-ի պայմաններում գլուխ բարձրացրած նացիոնալիզմի ու շովինիզմի, ինչպես և օտարերկրյա իմպերիալիստների, վտարանդիական հակահեղափոխական մնացուկների դեմ պայքարելու մարտական զենք։ Անդրֆեդերացիան երկրամասում ամրապնդեց պրոլետարիատի դիկտատուրան՝ սովետական իշխանությունը, հաստատեց կայուն խաղաղություն, ապահովեց երեք հանրապետությունների սոցիալ-տնտեսական, մշակութային հզոր վերելք։ Ծաղկեցին սոցիալիստական ազգերը, որոնք ունեին միասնական գաղափարախոսություն։

«ՍՍՀ Միության ստեղծումը,— ասված է «ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— Վլադիմիր Իլյիչ Լենինի գաղափարների, ազգային քաղաքականության լենինյան սկզբունքների կենդանի մարմնացումն է»[6]։

ՍՍՀՄ կազմավորման ճանապարհին հարկ եղավ հաղթահարել ոչ քիչ դըժվարություններ, գտնել դաշինքի այնպիսի պետական ձևեր, ընդհանուր միութենական մարմինների և հանրապետությունների իրավունքների այնպիսի հարաբերակցություն, որոնք առավելագույն չափով ապահովեին միասնությունը։ Միասնական սոցիալիստական պետության ստեղծման ուղեհարթի ժամանակ դրսևորվեցին տարբեր կարծիքներ։ Վ. Ի. Լենինը, մերժելով սխալ տենդենցները, իր հանճարի ուժով լուսավորեց կուսակցության ճանապարհը, ցույց տվեց միավորման միակ ճիշտ ուղին։ Նա առաջ քաշեց միասնական միութենական պետության ստեղծման պլանը՝ իրավահավասար հանրապետությունների կա-

---

[5] Տե՛ս Первый Закавказский съезд Советов. Тифлис, 1923, с. 1.

[6] «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը. Երևան, 1982, էջ 5։

մավոր միության ձևով։ Վ. Ի. Լենինը ամբողջ ուժով ընդգծեց, որ մենք, լինելով ինտերնացիոնալիստներ, ձգտում ենք բոլոր ազգերի բանվորների և գյուղացիների կամավոր դաշինքին։ Գնալով զարգանում էր սովետական պետական շինարարությունը, որի քաղաքական հիմքը Սովետներն են, սովետական դեմոկրատիան։

1922 թ. վերջին սովետական հանրապետությունների միավորիչ շարժման ալիքը ավելի ուժեղացավ։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1922 թ. հոկտեմբերի 6-ի պլենումը, պաշտպանելով Վ. Ի. Լենինի նախաձեռնությունը, անհրաժեշտ համարեց Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրֆեդերացիայի և ՌՍՖՍՀ-ի միջև Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ միավորվելու վերաբերյալ պայմանագրի կնքումը։ Դեկտեմբերի 30-ին Կրեմլում բացված Սովետների համամիութենական առաջին համագումարը, արտահայտելով սովետական բոլոր հանրապետությունների միասնական կամքը, ընդունեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման մասին պատմական որոշումը։

Սովետական ազգային պետականությունները մեծ Հոկտեմբերի ծնունդն են։ Եթե ՍՍՀՄ կազմավորման ժամանակ, 1923-ի սկզբին, երկրում կային 33 ազգային պետություն և ազգային-պետական գոյացումներ, այդ թվում՝ 4 միութենական, 13 ինքնավար հանրապետություն և 16 ինքնավար մարզ, ապա այժմ կան 15 միութենական և 20 ինքնավար հանրապետություն, 8 ինքնավար մարզ և 10 ինքնավար օկրուգ։ ՍՄԿԿ Կենտկոմի «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» որոշման մեջ ասված է. «ՍՍՀՄ կազմավորումն իր կազմով բազմազգ, գաղափարախոսությամբ ու քաղաքականությամբ, կազմակերպական կառուցվածքով, գործունեության սկզբունքներով խորապես ինտերնացիոնալիստական՝ բոլշևիկների լենինյան կուսակցության մեծագույն ծառայությունն է»[7]։

Սովետական բազմազգ պետության հիմնադիր Վ. Ի. Լենինը նշել է, որ սովետական հանրապետությունը միավորում է բոլոր ազգերի աշխատավորներին և անխտիր պաշտպանում է բոլոր ազգերի աշխատավորների շահերը։ ՍՍՀՄ պետականության ինտերնացիոնալիզմին բնորոշ են նրա հեղափոխական, դասակարգային բնույթը, սոցիալիստական բովանդակությունը, բանվորների, գյուղացիների և մտավորականության անխախտ դաշինքը՝ բանվոր դասակարգի առաջատար դերի պայմաններում, մարքսիստական-լենինյան գաղափարախոսությունը, որոնք «արթնացնում են աշխատավորների դասակարգային գիտակցությունը և ամրակուռ միություն են կազմակերպում նրանցից»[8]։ Վ. Ի. Լենինը, լինելով մեծ ինտերնացիոնալիստ, սովորեցրել է որ այլազգիներին «ճնշելը մի փայտ է, որը երկու ծայր ունի։ Մեկով նա հարվածում է «այլազգուն», մյուսով՝ ռուս ժողովրդին»[9]։

Լիովին կերպարանափոխվել է սովետական մեծ ընտանիքի իրավահավասար անդամ միութենական և ինքնավար հանրապետությունների սոցիալ-քաղաքական, տնտեսական, մշակութային դեմքը։ Այսպես, օրինակ, եթե ՍՍՀՄ-ում 1913—1979 թթ. արդյունաբերության արտադրանքն ամբողջությամբ վերցրած աճել է 157 անգամ, ՌՍՖՍՀ-ում՝ 155, Ուկրաինայում՝ 102 անգամ, ապա Ղազախստանում՝ 238, Բելոռուսիայում՝ 221, Մոլդավիայում՝ 281, Կիրգիզիայում՝ 344, Հայաստանում՝ 362 անգամ[10]։ Նույնպիսի ձևով աճել են մշակույթը, գիտությունը և արվեստը։ Իրականացավ Վ. Ի. Լենինի կանխատեսումն այն մասին, թե սոցիալիզմը «ստեղծում է մարդկային համակեցության նոր, բարձրագույն ձևեր»[11]։ ՍՍՀՄ-ում ռեալ իրողություն է դարձել մարդկանց պատմական նոր ընդհանրությունը՝ սովետական ժողովուրդը։

7 «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը, էջ 5։

8 Տե՛ս Վ. Ի. Լենին. Երկերի լիակատար ժողովածու. հ. 36, էջ 655։

9 Նույն տեղում. հ. 24, էջ 104։

10 Տե՛ս «Լենինյան ուղիով». 1982, № 3, էջ 26։

11 Վ. Ի. Լենին. Երկերի լիակատար ժողովածու. հ. 26, էջ 44—45։

ՍՍՀՄ կազմավորման ցեմենտող ուժը Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն է, Վ. Ի. Լենինի պատկերավոր արտահայտությամբ՝ «մեր դարաշրջանի միտքը, պատիվն ու խիղճը»[12]։ Հեղինակությունն ու ազդեցությունը մեկընդմիշտ տրվող բաներ չեն։ Լենինյան կուսակցությունը իր ամենօրյա եռանդուն գործունեությամբ հաստատում է իր ավանգարդի իրավունքը։ ՍՄԿԿ-ն միավորում է Սովետական Միության ավելի քան 100 ազգերի, ազգությունների և էթնիկական խմբերի առաջավոր, նվիրված ներկայացուցիչներին։ Անշեղորեն աճում է գիտական կոմունիզմի, ամբողջ ժողովրդի կուսակցության ղեկավար և ուղղություն տվող դերը։ Երբ Իլյիչը սկսեց իր հեղափոխական գործունեությունը, Ռուսաստանում կային հատուկենտ մարքսիստներ։ Երբ լենինյան կուսակցությունը 1917 թ. «Ավրորայի» համազարկերով ազդարարեց նոր դարաշրջանի սկիզբը, հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա, նրա շարքերում կար 350 հազար մարդ, որոնց հետևից գնում էին միլիոններ։ Իսկ ՍՄԿԿ XXVI համագումարի նախօրեին լենինյան կուսակցության շարքերում կար 17 միլիոն 480 հազար կոմունիստ։

ՍՄԿԿ XXVI համագումարը, որ նշանավոր ուղենիշ էր կուսակցության ու ժողովրդի կյանքում, ակնառու կերպով ցուցադրեց կուսակցության և ժողովրդի անխախտ միասնությունը, սովետական հասարակության մշտապես ամրապնդվող սոցիալ-քաղաքական, բարոյա-գաղափարախոսական հզոր միությունը, բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության, ժողովրդական մտավորականության անխախտ դաշինքը, ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ու համագործակցությունը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի կենարար ուժը։ Զարգացած սոցիալիզմի Սահմանադրության 6-րդ հոդվածում ասված է. «Սովետական հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժը, նրա քաղաքական սիստեմի, պետական ու հասարակական կազմակերպությունների միջուկը Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն է։ ՍՄԿԿ-ն գոյություն ունի ժողովրդի համար և ծառայում է ժողովրդին»[13]։ Կոմունիստական քաղաքակրթությունը, ռեալ սոցիալիզմը, խաղաղության համար մղող անդուլ պայքարը, միջազգային բանվորական և կոմունիստական շարժման ցեմենտումը, գաղութատիրության դեմ ծավալած պայքարը և բազմաթիվ ու բազմապիսի համաշխարհային սխրանքները, որ լենինյան կուսակցությունը կատարել է իր տիտանական ավելի քան 80-ամյա գործունեության ընթացքում, բարի անուն է ստեղծել նրա համար, արժանացել համընդհանուր ճանաչման։ Ընթանալով լենինյան կուրսով, իրականացնելով լենինյան ազգային քաղաքականությունը, ՍՄԿԿ-ն ամրապնդում և զարգացնում է սովետական միասնական մեծ ընտանիքի ժողովուրդների եղբայրական միասնությունն ու համագործակցությունը։ Սովետական բազմազգ պետությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ դարձել է կոմունիստական հասարակարգի կառավարման գլխավոր գործիքը, խաղաղության և դեմոկրատիայի հուսալի պատվարը։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ՍՍՀՄ-ի մեջ համախմբված ժողովուրդների հեղափոխական վերակերտիչ գործունեության արգասիքը զարգացած սոցիալիստական հասարակության կառուցումն է։ «Դա,— ինչպես օրենսդրական կարգով սահմանված է ՍՍՀՄ Սահմանադրության մեջ,— մի հասարակություն է, որտեղ ստեղծված են հզոր արտադրողական ուժեր, առաջավոր գիտություն ու կուլտուրա։ Դա սոցիալիստական հասուն հասարակական հարաբերությունների հասարակություն է, հայրենասեր և ինտերնացիոնալիստ աշխատավորների բարձր կազմակերպվածության, գաղափարախոսության և գիտակցության հասարակություն։ Զարգացած սոցիալիզմը կոմունիզմի մեկնակետն է։ Նրա տարբերիչ գիծը բանվոր դասակարգի արագ աճն է, էկոնոմիկայի բոլոր ճյուղերում նրա դերի արագ բարձրացումը, այդ թվում՝ գյուղատնտեսության մեջ։ Զարգացած սոցիալիստական հասարա-

12 Նույն տեղում. հ. 34, էջ 117։

13 Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրություն. Երևան, 1979, էջ 8։

կարգի «սոցիալական բանականությունը ու սոցիալական սիրտը», Կ. Մարքսի խոսքերով ասած, մնում է ժամանակակից բանվոր դասակարգը։ Այժմ ՍՍՀՄ-ում կա 80 միլիոն բանվոր, որը կազմում է զբաղված բնակչության երկու երրորդը։ Փոխվել է ժամանակակից բանվորի աշխատանքի բնույթը։ Շուրջ 280 պրոֆեսիաներ կան, որոնք բանվորից պահանջում են միջնակարգ մասնագիտական պատրաստություն։ Աճում է պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսուցման ցանցը։ Բանվոր դասակարգի հեղափոխական գաղափարախոսությունը ու բարոյախոսությունը, հայրենասիրությունը, ինտերնացիոնալիզմը, կոլեկտիվիստական հոգեբանությունը, նրա շահերն ու իդեալները դառնում են սովետական հասարակության բոլոր խավերի սեփականությունը։ Ամբողջ խնդիրն այն է, որ կուսակցության քաղաքականությունը միաձուլվի մասսաների գործունեության հետ, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած՝ «գործել այնպես, ինչպես այդ պահանջում է կոմունիոմը»։ ՍՄԿԿ-ի, իբրև սովետական ժողովրդի մարտական ավանգարդի, 80-ական թթ. գործունեության գլխավոր ուղղությունը, ինչպես նշել է ՍՄԿԿ XXVI համագումարը, կոմունիստական շինարարության ծավալումն ու խաղաղության ամրապնդումն է։ Դրան է նպատակամղված ՍՍՀՄ ամբողջ գործունեությունը։

ՍՍՀՄ 60-ամյա նվաճումները փայլուն կերպով շարադրված են «ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ։ Սովետական Միությունում հաջողությամբ զարգանում է միասնական ժողովրդատնտեսական կոմպլեքսը՝ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամության նյութական հիմքը։ Արդի պայմաններում շարունակվում է սովետական հասարակության բոլոր դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցումը, որը, ինչպես բնութագրել է ՍՄԿԿ XXVI համագումարը, տանում է դեպի հասուն սոցիալիզմի պատմական շրջանակներում հասարակության՝ գլխավորապես և հիմնականում անդասակարգ կառուցվածքի հաստատումը։ «ՍՍՀՄ կազմավորումը,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— ժողովուրդների միջև բարեկամության, վստահության, փոխօգնության հարաբերությունների հաստատումը վիթխարի չափով արագացրեց Հոկտեմբերի ծնունդ հանդիսացող հասարակության հոգևոր զարգացումը...

Զարգացած սոցիալիզմը ակնառու կերպով ցուցադրում է երկրի բոլոր ազգերի ծաղկման ու մերձեցման փոխադարձ անխզելի կապը սոցիալիստական դեմոկրատիայի խորացման հետ»[14]։

ՍՍՀՄ-ը մեծ առաքելություն է կատարում՝ հսկայական ավանդներ մուծելով մարդկության հասարակական զարգացման առաջընթացում։ Շուրջ 37 տարի է, ինչ սոցիալիզմը դուրս է եկել ՍՍՀՄ-ի շրջանակներից և դարձել է ինտերնացիոնալ ուժ։ Ստեղծվել է սոցիալիզմի համաշխարհային սիստեմը՝ հակիմպերիալիստական պայքարի գլխավոր ուժը։

ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակը մեծ Հոկտեմբերի լեգենդար գործի հաղթանակն է ու շարունակությունը, սովետական մարդու համազգային հրպարտության, բոցաշունչ հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի հիասքան տոնը։ ՍՍՀՄ կազմավորումը և հաջող զարգացումը, ինչպես ասված է ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, միջազգային անանց նշանակություն ունի, պատմական կարևոր բնագիծ է նշանավորում ժողովուրդների իրավահավասարության և բարեկամության, աշխարհի հեղափոխական նորացման համար առաջավոր մարդկության դարավոր պայքարում։

Սրընթաց է ժամանակի հոսքը։ Որքան առաջ է գնում ժամանակը, այնքան ավելի ու ավելի վեհորեն է դրսևորվում մարքսիզմ-լենինիզմի, հեղափոխական տեսության և պրակտիկայի կենսահաստատ ուժը, այնքան ավելի է մեծանում Սովետական Միության պատմական մեծ առաքելությունը իբրև ժողովուրդների խաղաղության, անկախության, ազատության և երջանկության համար մարտնչող առաջամարտիկի։

---

14 «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին», էջ 18, 19։